

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-2/ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

### **Աշխատակազմի առաջատար մասնագետը.**

- 1) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը (գանձումը),
- 2) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձման աշխատանքները,
- 3) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրսգրման գործառույթներ,
- 4) Հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին:

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

- 1) Առնվազն միջնակարգ կրթություն,
- 2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հանրային ծառայության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին» և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 11.00-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե՝ ք. Արմավիր, Խ. Աբովյան 71, հեռ. 0237 2 07 70, 0237 2 76 49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի մայիսի 30-ը:

Հեռ.՝ 0231 6 47 22

Էլ. փոստ՝ [musaler.armavir@mta.gov.am](mailto:musaler.armavir@mta.gov.am)

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1